# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ԷՆ ՀՄԱԾՁԲ-20/71-378-20

ք. Երևան «9» 12 2020թ.

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա.Խաչատրյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Հակոբ Վարդանյան Ա/Ձ-ն, ի դեմս տնօրեն Հակոբ Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային փոխադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.2 [illegible]
տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 7 750 000 (յոթ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.2 Պայմանագրի N 1 հավելվածով [illegible] պայմանագրի 4.1 կետում
առայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը աշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն ատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում ատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, ակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում ն ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և տարածվում է 30.11.2020 թվականից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն

---

հանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու

7.10 Սույն պայմանագրի կատարման ընթացքում ծագած վեճերը և տարաձայնությունները ...
Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **15** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ու**

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ 900011036168
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02698604

____________________Ա. Խաչատրյան

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Հակոբ Վարդանյան» ԱՁ
Հասցե՝ ք.Երևան, Բակունցի 1 նրբ., 2շ, բն 22
Հ/Հ 1570052970700100
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 25417695

____________________Հ. Վարդանյան

Կ.Տ.

Հավելված N 1
« 9 » 12 2020թ. կնքված
N ՀՀ ԷՆ ՀՄԱԾՁԲ-20/71- ծածկագրով պայմանագրի
3/8-20

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը** |
| 1 | 60231200/2 | Արցախի հանրապետությունից արձակուրդի նպատակով ժամկետային զինծառայողների տեղափոխման տեխնիկական բնութագիր **01.12.2020թ** | դրամ | 7 750 000 | 1 | Երևան-Ստեփանակերտ-Երևան | 01.12.2020թ Համաձայն` ՀՀ կառավարության 01.12.2020թ .դեկտեմբերի 1-ի N1916-Ն որոշման 3-րդ կետի |

| Տրանսպորտային միջոցի մակնիշը, պետհամարանիշը | | | Նստատեղերի քանակը | Փաստացի տեղափոխվածների քանակ | Երթուղին և տեղափոխման ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Mercedes Benz Sprinter | 36CV407 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 2 | Mercedes Benz Sprinter | 35SA148 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 3 | Mercedes Benz Sprinter | 77XQ727 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 4 | Mercedes Benz Sprinter | 09OA010 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.202 |

| | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Sprinter | | | | ակերտ Երևան 01.12.2020թ | | | | | |
| | | | 6 | Mercedes Benz Sprinter | 75DD500 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | |
| | | | 7 | Mercedes Benz Sprinter | 58GG558 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | |
| | | | 8 | Mercedes Benz Sprinter | 855PP55 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | |
| | | | 9 | Neoplan | 855RR85 | 55 | 55 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | |
| | | | 10 | Neoplan | 855MM85 | 55 | 55 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | |
| | | | 11 | Mercedes Benz Sprinter | 36XG559 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | |
| | | | 12 | Mercedes Benz Sprinter | 58VN777 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | |
| | | | 13 | Mercedes Benz Sprinter | 11XL771 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | |
| | | | 14 | Mercedes Benz Sprinter | 35TA294 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | |
| | | | 15 | Mercedes Benz Sprinter | 35RN025 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | |
| | | | 16 | Mercedes Benz Sprinter | 36ST113 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 0թ |
| 17 | Mercedes Benz Sprinter | 58AT058 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 18 | Mercedes Benz Sprinter | 36DQ376 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 19 | Isuzu | 46GG600 | 40 | 40 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 20 | Isuzu | 46FF600 | 40 | 40 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 21 | Neoplan | 56OQ555 | 55 | 55 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 22 | Mercedes Benz Sprinter | 29AA229 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 23 | Mercedes Benz Sprinter | 88XL880 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 24 | Neoplan | 11TQ101 | 55 | 55 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 25 | Mercedes Benz Sprinter | 033OQ70 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 26 | Mercedes Benz Sprinter | 36FS554 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 27 | Mercedes Benz Sprinter | 36ST630 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Sprinter | | | | ...ակերտ Երևան 01.12.2020թ | | | | | | |
| | | | 29 | Mercedes Benz Sprinter | 86OD800 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | | |
| | | | 30 | Mercedes Benz Sprinter | 77VO773 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | | |
| | | | 31 | Mercedes Benz Sprinter | 77XX303 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | | |
| | | | 32 | Mercedes Benz Sprinter | 35MD131 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | | |
| | | | 33 | Mercedes Benz Sprinter | 81QP888 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | | |
| | | | 34 | Mercedes Benz Sprinter | 91AL090 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | | |
| | | | 35 | Mercedes Benz Sprinter | 35XD041 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | | |
| | | | 36 | Ford | 33TO189 | 17 | 17 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | | |
| | | | 37 | Mercedes Benz Sprinter | 77DU773 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | | |
| | | | 38/ | Mercedes Benz Sprinter | 35RU848 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ | | | | | | |
| | | | 39 | Mercedes Benz Sprinter | 34ON158 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան | | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 40 | Mercedes Benz Sprinter | 02OQ012 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 41 | Mercedes Benz Sprinter | 35AO361 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 42 | Mercedes Benz Sprinter | 81XS800 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 43 | Mercedes Benz Sprinter | 82RV800 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 44 | Mercedes Benz Sprinter | 77TX727 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 45 | Mercedes Benz Sprinter | 77UX727 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 46 | Mercedes Benz Sprinter | 35QS850 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 47 | Mercedes Benz Sprinter | 77UG727 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 48 | Mercedes Benz Sprinter | 77XQ727 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 49 | Mercedes Benz Sprinter | 36CZ313 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 50 | Mercedes Benz Sprinter | 29CC099 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 51 | Mercede | 29MA09 | 20 | 20 | Երևան – |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 0թ |
| 52 | Mercedes Benz Sprinter | 36RG115 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 53 | Mercedes Benz Sprinter | 81NL800 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 54 | Scanya | 283AG61 | 55 | 55 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 55 | Neoplan | 36SD460 | 55 | 55 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 56 | Iveco | 348AR61 | 55 | 55 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 57 | Mercedes Benz Sprinter | 36VM207 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 58 | Mercedes Benz Sprinter | 10RG101 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 59 | Mercedes Benz Sprinter | 10QO101 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 60 | Mercedes Benz Sprinter | 54DD505 | 20 | 20 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 61 | Mercedes Benz Sprinter | 54PP505 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.2020թ |
| 62 | Mercedes Benz Sprinter | 35PQ505 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01.12.202 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | Երևան 01□12□20 20թ |
| 64 | Mercedes Benz Sprinter | 30CG088 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01□12□20 20թ |
| 65 | Mercedes Benz Sprinter | 35QP462 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01□12□20 20թ |
| 66 | Mercedes Benz Sprinter | 10RG101 | 20 | 18 | Երևան – Ստեփանակերտ Երևան 01□12□20 20թ |
| | | | | | |
| Ընդամենը 66 մեքենա | | | 1602 նստատեղ | 1550 անձ | |
| | | | | | |

* *ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան փվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ 900011036168
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02698604

_____________ Ա.Խաչատրյան

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«Հակոբ Վարդանյան» ԱՁ
Հասցե՝ ք.Երևան, Բակունցի 1 նրբ., 2շ, բն 22
Հ/Հ 1570052970700100
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 25417695

_____________ Հ. Վարդանյան

Կ.Տ.

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 60231200/2 | տրանսպորտային փոխադրման ծառայություններ | | | | | | | | | | | | 7 750 000 | 7 750 000 |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Հ/Հ 900011036168
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02698604
______________Ա.Խաչատրյան
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«Հակոբ Վարդանյան» ԱՁ
Հասցե՝ ք.Երևան, Բակունցի 1 նրբ., 2շ, բն 22
Հ/Հ 1570052970700100
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 25417695
______________Հ. Վարդանյան
Կ.Տ.

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ______________________ | ______________________ |
| գտնվելու վայրը ______________ | գտնվելու վայրը ______________ |
| հհ ______________________ | հհ______________________ |
| հվհհ ______________________ | հվհհ______________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ __________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| ______________________ | ______________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ______________________ | ______________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N _____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ____________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

____________________________
ազգանուն, անուն

____________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

____________________________
ազգանուն, անուն

____________________________
ստորագրություն